

ԳԻՐ ՄԵՐՈՅ ՀԱՐՅՆ
ՈՐ Ի ԴՈՒԻՆ ԺՈՂՈՎԵԱԼ
ՅԱՒՈՒՐՍ ՄԵԾԻՆ ՆԵՐՍԻՍԻ ՀԱՅՈՅ ՄԵԾԱՅ
ԵՒ ՎԱՍՆ ՔԱՂԿԵԴՈՆԻ

5 Ի քառասուն ամի թաղաւորութեանն իւրոյ՝ աստուածապսակեալ
կայսրն թէոդոս փոխի յաշխարհէս, եւ յաջորդէ զթաղաւորութիւնն Մար-
կիանոս, որ հրապուրեալ էր ի կնոջէ իւրմէ Պաղքերեա(յ), որ էր քոյր
թաղաւորին թէոդոսի, եւ աշակերտեալ ի ծածուկ Նեստորի վարդապե-
տութեանն, այլ ոչ իշխէր յայտնել ինչ ի բարեպաշտ թաղաւորէն թէո-
10 դոսէ [եւրոպեալ]։ Աստանաւ ժամանակ իմն զիւրոյ զտեալ՝ յայտնէ
զառաքաստեալ երբեմն զխորհուրդն, եւ լինի ջատագով Նեստորի աղան-
դոյն։ Եւ թախծեալ աղերսական բանիւք զայլ իւր Մարկիանոս, հան-
դերձ դաւողական եւ պատրուակեալ խորամանկութեամբ, խնդրէ հաս-
տատել իրկին զՆեստորի խոստովանութիւնն։ Որում ունկնդիր եղեալ եւ
15 հետեւեալ, ըստ կամաց նորա հրամայէ ժողովել՝ կրկին ըստ Նիկիական
գումարութեանցն, (81թ) երեք հարիւր տասն եւ ութիցն, որ լինի վեց
հարիւր երեսուն եւ վեց։ Եւ ժողովեցան ժողովն Քաղկեդոնի ի չորք ամի
թաղաւորութեանն Մարկիանոսի, եւ մերժեալ ընկեցին զԴիոսկորոս յաշ-
տիճանէ քաղաւորութեան յԱղեկանդր քաղաքի։ Այս յերկրորդում
20 ամի պատերազմի Կարմիրն Վարդանայ յԱրտաղականն դաշտի, որ յա-
ղաքս հաւատոցն, որ ի Քրիստոս կատարեցան ի պարսկական զաւրացն,
ի տեղապահութեանն Ղեւոնդի քորեպիսկոպոսի կաթողիկոսարանի։

Արդ, ի լինել ժողովոյն Քաղկեդոնի՝ կարգէ թաղաւորն Մարկիանոս
սահման հաւատոց խոստովանութեան հանդերձ չարաչար ուսմամբ խոր-
25 հրդակցաւք, որում ոչ հաւանեալ հարքն՝ ասեն. «Այդ Նեստորի վար-
դապետութեանն է խոստովանութիւն, որում ոչ երբեք հաւանեցաք»։
Վասն զի ի ժողովոյն Նիսիոսի, որ ի վերա(յ) Նեստորի, մինչեւ ի ժո-
ղովն Քաղկեդոնի էին ամբ Իկ։

Եւ լուեալ պատասխանի աստուածապոյն ի թաղաւորէն, ոմանք յերկեղէ
30 եւ այլք ակնառութեամբ թաղաւորին՝ զոր կարգեցին ըստ նոցա խոն-
դոյն։ Վասն զի դէմս ոչ երկուս ըստ Նեստորի իմացմանցն, այլ մի
կարգեցին ասել։ Իսկ ընութիւնս եւ ներդրածութիւնս երկուս՝ յատուկս,
զանազանս, զի մի՛ եւ դէմս երկուս ի վերայ բերելով՝ երկուս որդիս ըստ
Նեստորի աւանդութեանն լինիցի վերադին աւանդել այսպէս։ Եւ զՄա-
35 րիամ Աստուածածին դու, այլ ոչ մարդածին։

Եւ ժամ տուեալ համբաւ ժողովոյն Քաղկեդոնի ի Հայս, եւ ընթեր-
ցեալ զսահմանադրութիւն խոստովանութեան նոցա, զոր գեկոյց Պետրոս
Անտիոքացի եւ Աբղիշոյ եւ այլք բաղումք յուղղափառացն, որ ոչ հաւա-
նեցան նորաձայնութեանն Քաղկեդոնի։

40 (82ա) Իսկ ի ժամանակս Ներսիսի Հայոց Կաթողիկոսի, եւ Պետրոսի
Սիւնեաց քերթողի եւ եպիսկոպոսի, եւ այլոց եպիսկոպոսաց Հայոց՝

հրամայեցին ժողով մեծ լինել ի Դրեմին։ Այս ի չոր(ր)որդ ամի Ներ-
սիսի կաթողիկոսութեան եղեւ [ի քսան] եւ չորք խորովու արքայի,
եւ ի տասն եւ չորք Յունտիանոսի կայսեր, եւ կատարմանն ի Քրիստոս

45 սուրբն Յիզբուհտ։

Եւ ի բաց մերժեցին զժողովն Քաղկեդոնի նդովիւք չափ. յորում ամի
եւ զգիրսն իսկ թարգմանեցին զՏիմոթէոսի երկրորդ քղթիմ մեկնութիւն
ի հայկական բառ, եւ զՓիլալսոնին. եւ հակառակ Քաղկեդոնի ժողո-
վոյն ճառս ոչ սակաւս կարգեցին։ Գրեցին եւ զսրբասացութիւնսն զՍա-
50 չեցարդ կցուրդս ընդդիմակս նոցա բարձանմանցն զՔրիստոսի միաւո-
րեալ ընութիւնն։ Զի որպէս ի ժողովն Նիկիայ զՀաւատաման կարգեցին ի
բաւոյն Արիոսի մոլորութեանն՝ որ արարած զՈրդի ուսուցանէր, եւ
քակտումն Արիոսի մոլորութեանն՝ որ արարած հաստատեցին, եւ
ի Կոստանդինուպոլիս երկրորդ անգամ Հաւատամ հաստատեցին, եւ
յեփեսոսի ժողովեալ ընդդէմ Նեստորի՝ որ տաճար եւ բնակութիւն զմար-
55 մին Բանին Աստուծոյ ասէր յերկուս որոշելով որդիս զմի Քրիստոս՝
զՓառս ի բարձունսն վարդեցին, այսպէս եւ սոքա լուեալք թէ երկու
բնութիւնս բարձանեցին Աստուծոյ Բանին՝ կարգեցին զՍաչեցարդ յերիս
սրբասացութիւնսն, զի մի՛ մարմին յատուկ ի Բանէն մնացէ խաչեալ եւ
փրկեւն զմեզ իւրով անդուզական արեամբն, եւ զի մի՛ մարդապաշտք
60 գտանիցիմք, այսինքն սոսկ մարդով փրկեալք, կարգեցին զՍաչեցարդ
կցուրդ ասելով. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հղաւր, սուրբ եւ անմահ,
որ խաչեցար վասն մեր, ողորմեա մեզ»։

Զի թէպէտ եւ տեսաք զսա մարդ, այլ Աստուած էր. թէպէտ եւ ի տկա-
րութիւն կամաւ(82թ) որաբար խոնարհեցաւ, այլ հղաւր է(ր)։ Թէպէտ եւ
65 զմահ կամաւորաբար կրեաց, այլ անմահ էր։ Սմա փառատրեմք՝ ըստ
մարդարէին ձայնի. «Սուրբ Աստուած, սուրբ եւ հղաւր, սուրբ եւ ան-
մահ», ըստ որում մարդարէն վկայեաց. «որ յետին դարս վասն մերոյ
փրկութեան խաչեցար, ողորմեա մեզ»։

Եւ վասն զի զերիս սրբասացութիւնս աստուածախաւսն Եսայի ի վերայ
70 Որդւոյ լուաւ, յայտ է յորոյ պատմեաց. «Տեսի զՏէր նստեալ յաթոռ
բարձրութեան եւ վերացելոյ»(1)։ Աթոռ ասաց, որ զմի անձնաւորութիւնն
նշանակէ, եւ ոչ աթոռք ըստ Դանիէլի տեսիւնն զուշակէր։ Եւ դարձեալ
զի ասաց «Լի է երկիր փառաւք նորա»(2) որով առաւել յայտնի խոր-
հուրդ տեսարէնութեանն։ Զի յայնմ ժամանակի ոչ ուրեք յոլորտս երկրի
75 հնչէր փառաբանութիւն աստուածութեանն, բայց յիսրայէլի միայն.
զիմարդ սա ասաց յերկրի լինել։ Այլ վասն զի մարդարէական ակամբն
եւ ետես զգալուստն յերկրի, զայն որ ի վերայ աթոռոյն նստեալ էր, եւ
զտարածանէն ծաղկազարդ քարոզութիւն աւետարանին, եւ լնուլ ընդ-
հանուր նորայն փառաբանութեան ըստ Տեառն բանին՝ թէ «Քարոզեսցի
80 աւետարանս ընդ ամենայն երկիր»(3)։ Եւ նմա փառք յաւիտեանս յա-
ւիտենից. Քրիստոս աւրհնեալ է յաւիտեան։

(1) Եսայի, 2, 1:

(2) Եսայի 2, 4:

(3) Մատթ. 12, 13:

ղիկոսի մահուան թուականը, որ Յովհաննէս Եփեսացիի պատմագրին վկայութեան համաձայն պատահեցաւ Պոլսոյ մէջ՝ հոն ապաւինելէն երկու տարի վերջ, որ է 574ին (33)։ Յովհաննէս Գարեղեանի կաթողիկոսութիւնը տասներեօթ տարի նշանակուած է չափ մը դաւադանադիրքերու մէջ (34)։ Հետեւաբար Յովհաննէսի կաթողիկոսութեան սկիզբը կը հանդիպի 557ին իսկ Ներսէսին՝ 548ին։ Բայց ահա Ներսէսի կաթողիկոսութեան սկիզբը դնելով 548 թուականը, անոր կաթողիկոսութեան չորրորդ տարին չի զուգադիպիր 555ի Դուինի ժողովքի թուականին։

Ունդիրը լուծելէ առաջ ըսենք թէ միւսնոյն դժուարութիւնը կը ներկայանայ միւս երկու տարեթիւերու նկատմամբ ալ, որոնք մեր յիշատակարանին մէջ դըրուած են իբր Դուինի ժողովքին թուական. այսինքն է Յուստինիանոս կայսեր 14րդ տարին, որ կը հանդիպի 531 թուականին. եւ Յիդիտրուիտ վկային նահատակութեան տարին, որ պատահեցաւ «Ի Իֆ ամին Սոսրովու թագաւորի, որ օր երկու էր քաղոց ամսոյ, յաւուր կիւրակէի յերկրորդ ժամու» (35)։ Յուստինիանոս

կայսեր անունով եղած տարեթիւը չափ մեծ տարբերութիւն ունի Դուինի ժողովքի թուականէն, այնպէս որ անոր սխալ ըլլալու մասին տարակոյս չի կրնար ըլլալ։ Սակայն նոյնը չենք վրնար ըսել Յիդիտրուիտ վկային նահատակութեան թուականին համար, որ թէեւ չի զուգադիպիր ճշտիւ ժողովքի տարեթիւն հետ, բայց քիչ տարբերութիւն ունի։ Եւ ինչպէս Դուինի ժողովքին թուականը ճշգրիտ կերպով նշանակուած է նոյն ժողովքի պաշտօնական թուղթին մէջ, նոյնպէս ճշգրիտ եւ որոշ թուականը ունինք Յիդիտրուիտ նահատակին վկայարանութեան մէջ։ Ժողովքի թուականն է, ինչպէս ըսուեցաւ, 555ի Մարտ 21։ Իսկ Յիդիտրուիտ նահատակին 553ի Նոյեմբեր 9։ Տարբերութիւնը թէեւ քիչ՝ բայց անբաւարար ժամանակակցութիւնը ստեղծելու համար։

Աչքի առջեւ ունենալով Ներսէսի կաթողիկոսութեան չորրորդ տարիով եղած ժամանակակցութեան պարագան ալ, որ ինչպէս տեսանք կը հանդիպի 552-3 տարեշրջանին, չենք կարծեր որ բոլորովին սխալի մը արդիւնք ըլլայ այս երկու թուականներու յիշատակութիւնը իբրեւ Դու-

ստմամբ 15 տարուայ հայրապետութիւն է վերագրուած. Յովհաննէս պատմաբանը 17 տարի է ասում, անշուշտ հաշուելով նաեւ աքսորի երկու տարին Կ. Պոլսում։ Ուստի Տէր Մինասեան 15 տարին պակասեցնելով 571 թուականէն, որ Յովհաննէս Բ. կաթողիկոսին Պոլիս փախչելու թուականն է, անոր կաթողիկոսութեան սկիզբը կը դնէ 556-7, մեզի պէս։ Բայց վերեւ նկատուած տարբերակը, թե եւ թէ տարեթիւերու մէջ, դուրսէ արդիւնք է գրեթե չիթման քան մէկուն մինչեւ փախուստը, միւսին մինչեւ մահը հաշուելուն։ Ուստի նախընտրելի է թէ ընթերցումը, որ աւելի ընդհանուր է, եւ Յովհաննէսի կաթողիկոսութեան տարեթիւերը հաշուել մինչեւ իր մահուան տարին։

(35) Peteers, De Sancto Izbozeta, martyre en Perside, Acta Sanctorum, Nov. IV, Bruxelles, 1925 p. 213. Վարք եւ վկայարանութիւնք սրբոց, Վենետիկ, 1874, էջ 130։

ւինի ժողովքին թուական. որքան որ Սոսրովի 24րդ տարին եղած ժողովքին համար ուղիղ չըլլան անոնք։

Հարցին լուծումին համար հետեւեալը կը մտածենք։ Եթէ Դիւրք Թիդոցի՝ ժողովքին վերաբերեալ նամակները քննենք, կը տեսնենք անմիջապէս որ Ներսէսի օրով քանի մը ժողովք տեղի ունեցած է, կամ լաւ եւս Դուինի ժողովքը քանի մը տարի տեսած է, ինչպէս նկատուած է արդէն Տէր Մկրտչեան ալ (36)։ Այս ժողովներէն առաջինը տեղի ունեցած է Արդիւտոյ ասորիի խնդիրքը քննելու եւ զինքը փախկոպոս օծելու համար։ Այսպէս կը կարգանք Ներսէսի պատասխանին մէջ ուղղուած ասորիներու. «Հնազանդեցաք եւ հաւանեցաք հրամանի ձերում եւ վկայութեամբ ձերով ձեռնադրեցաք զայրդ ընտրեալ ի ձեզ զԱրդիւտոյ, ի մեծապատիւ աշտիճան քահանայապետութեան, ամենայն եպիսկոպոսոք աշխարհիս հանդերձ քահանայիս սրբոյ եկեղեցւոյ. կամաւ ազատաց աշխարհականաց եւ համարեմ ժողովրդականաց, եւ առաքեցաք առ ձեզ (37)։ Քանի մը տարի վերջ տեղի կ'ունենայ ուրիշ ժողովք մըն ալ, ուր կը քննուի գլխաւորաբար Սուրբիկ նեստորականներու հարցը. այս ժողովքին կը մասնակցի եւ անոր պաշտօնական թուղթին կը ստորագրէ նաեւ Արդիւտոյ, իբրեւ եպիսկոպոս ասորեաց ուղղափառաց։ Ահա այս ժողովքն է որ 555ի Մարտ 21ին տեղի ունեցած է։ Հետեւաբար Արդիւտոյի ձեռնադրութեան համար եղած ժողովը քանի մը տարի առաջ եղած է անշուշտ. եւ աւելի ճիշտ 552-3ի տարեշրջանին։ Ասոր կը վկայէ գոնէ Եփեսոսի զարէն Անանիոս Ծիրակացիի ժամանակագրութիւնը, որ կ'ըսէ. «Եւ ի սորին աւուրս ձեռնադրեցաւ Արդիւտոյ եպիսկոպոս ի Ներսիս Հայոց կաթողիկոսէ, եւ յետ սակաւուց եւ եւ մարտիրոսացաւ ի Հայոս

սուրբն Յիդիտրուիտ ի պարսիկ մարդպանաց» (38)։ Տեսանք քիչ առաջ թէ Յիդիտրուիտ նահատակութեամբ 553 Նոյեմբեր 9ին. ուրեմն Արդիւտոյի ձեռնադրութեան համար գումարուած ժողովքը տեղի ունեցած նոյն տարուան սկիզբները։ Հետեւաբար մեր յիշատակարանին մէջ նշանակուած Դուինի ժողովքին թուականը, այն է կատարմանն ի Բրիտոս սուրբն Յիդիտրուիտ կը պատկանի Արդիւտոյի համար եղած ժողովքին։ Նոյնը կրնանք ըսել նաեւ ի չորրորդ ամի Ներսիսի կաթողիկոսութեան բացատրութեան համար. վասնզի, Ներսէսի կաթողիկոսութեան չորրորդ տարին կը հանդիպի 552-3ի տարեշրջանին։

Եզրակացնելով կրնանք ըսել որ մեր յիշատակարանի վկայութիւնը, ինչպէս նաեւ միւս բոլոր պատմական վկայութիւնները, որոնք Դուինի ժողովքին համար իբրեւ թուական նշանակած են Ներսէսի չորրորդ տարին եւ Յիդիտրուիտ վկային նահատակութեան տարին, աչքի առջեւ ունին Արդիւտոյի համար գումարուած ժողովքը։ Բայց սխալ մըն է, իրենց կողմէ, զայն համաձայնեցնել Սոսրովի 24րդ տարին հետ։ Սխալ մը որ բացատրելի է, քանի որ Սոսրովի 24րդ տարին ալ տեղի ունեցած է ուրիշ ժողովք մը Սուրբիկ նեստորականներու դէմ։ Եւ այդ ժողովքին թուականը արձանագրուած մնացած է ժողովքի պաշտօնական թուղթին մէջ։ Յետագայ պատմագիրները, որ անշուշտ ունէին ձեռքի տակ ոչ միայն վերջին ժողովքի պաշտօնական թուղթը, այլ նաեւ Արդիւտոյի ձեռնադրութեան թուականը, երկու տարբեր ժողովքները եւ թուականները վերածած են մէկի եւ ստեղծած բոլոր տարեթիւերով ժամանակագրութիւն մը։

Հ. ՊՕՂՈՍ ԱՆԱՆԵԱՆ

(Շարունակելի)

(36) Կարապետ վրդ., Հայոց եկեղեցւոյ պատմութիւն, Վաղարշապատ, 1908, էջ 210։

(37) Գիրք Թիդոց, էջ 57-58։

(38) Անանուս ժամանակագրութիւն, Անդ, էջ 75։ Կամ Ա. Արքաիմեան, Ա. Ծիրակացւոյ մատ. էջ 397։